



Ֆրանսական խորհրդարանին կողմէ ընդունուած օրինագիծը կը շարունակէ յուզել հասարակութիւնը եւ արժանանալ տարբեր գնահատականներու:

# ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ՄՕՏԵՑՈՒՄԸ

Ապտուլլահ Կիլ յայտարարեց, թէ եթէ գործընթացը աւարտի, ապա Հարկ է որ Ֆրանսա լքէ Միլսքեան Խմբակի Համանախագահութիւնը

Ֆրանսայի խորհրդարանին կողմէ նախընթաց օր ձայնեցող մեծամասնութեամբ ընդունուած ցեղասպանութիւններու ուրացման օրինագիծը կը շարունակէ յուզել Հասարակութիւնը եւ արժանանալ տարբեր արձագանգներու: Այսպէս, երկէ նիւթին շուրջ յայտարարութիւններ կատարեց Հանրապետութեան Նախագահ Ապտուլլահ Կիլ: Ան ըսաւ, թէ նախ եւ առաջ

այնտեղ կատարուած քրէնարկումները ու արտայայտուած խօսքերը կ'ընկալէ որպէս մեծ անարգանք մը թուրքերոյ եւ թուրք ժողովուրդին հանդէպ: Ըստ Կիլի, այսուհետեւ ոչ ոք պիտի կարենայ իր անկեղծ տեսակէտը յայտնել Ֆրանսայի մէջ, որ յայտնի էր որպէս բազմակարծութեան շուրջ մը: «Այս նիւթին շուրջ պատմաբանները պիտի չկարենան արտայայտել նոր կարծիքներ: Այսինքն Ֆրանսա յանցաւոր պիտի նկատուի պատժէ զանոնք, որոնք պաշտօնական տեսակէտէ զուրս կարծիք պիտի յայտնեն: Յուսամ ազգային ժողովին սկսած այս վէճն ու օրինագիծը հետագայ գործընթացներէն չեն անցնիր», իսկ Հայաստանի Նախարարութիւնը պիտի շարունակուի: Ան

նախագահ Նիքոլայ Սարգսյանի եւ իր երախտագիտութիւնը յայտնեց անոր՝ ընդգրծելով, որ Ֆրանսա վերջապէս պարտաւոր է իր նուիրածութիւնը Համամարդկային արժէքներուն: Երկէ արտայայտուեցաւ նաեւ Նիքոլայ Սարգսյան: Ան իրարու տեսակէտները փոխադարձաբար յարգելու կոչուողով թուրքերոյ: «Ես կը յարգեմ թուրք բարեկամներու տեսակէտները, ան մեծ երկիր մըն է, մեծ քաղաքակրթութիւն մըն է եւ առնոյնք ալ պէտք է յարգեն մեր տեսակէտները», նշեց ան: Սարգսյան ընդգծեց, որ Ֆրանսա ոեւէ մէկուն դաս չի տար եւ չի ալ ցանկար, որպէսզի ուրիշներ իրեն դաս տան: «Բոլոր պարագաներու մէջ մենք Հանրապետութեան մասնաբաժնի ենք: Ֆրանսա

«Հասարէց» թերթի Հաղորդումներուն Համաձայն, իսրայէլական ռազմական արդիւնաբերութեան ընկերութիւն մը Հանդիսացող «Էլ-պիթ սիսթըմ» պիտի նորոգէր իր քաղաքի զինուորական ներքին գործող «Ց-16» օդանավերու Հակաօդային պաշտպանութեան Համակարգերը: Սակայն իսրայէլ կը քաշուի թուրքերոյ եւ Իրանի սերտ Համագործակցութենէն: «Էլ-պիթ սիսթըմ» այս առթիւ կատարեց յայտարարութիւն մը ու ըսաւ, թէ իսրայէլի Պաշտպանութեան Նախարարութիւնը պէտք է զիջուի ընկերութեան կրած նիւթական վնասը:

## ՇՔԱՆՇԱՆԻ ՅԱՆՁՆՈՒՄ



Վեհափառ Հայրապետը եւ պարզեատրեալները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի Հանդիսարարութեամբ կայացուցաւ շքանշաններու յանձնման արարողութիւնը: Հայրենակէր ու ազգանուէր, ինչպէս նաեւ գիտական, գրական ու հրատարակչական գործունէութեան Համար Հայոց Առաքելական Ս. Եկեղեցւոյ «Ս. Մահակ-Ս. Մարտիկ» պատուոյ բարձր շքանշաններ յանձնուեցան մշակուիթի երեք գործիչներ Մետաքէլ Պօղոսեանին, Արամայիս Սահակեանին եւ Ռազմիկ Դուրեանին:

Արարողութեան սկիզբին գրականութեան վաստակաշատ մշակներու Մայր Աթոռի մէջ ներկայութիւնը ողջունեց Ս. Միքայիլ Արքեպիս Գեորգեան: Ապա անոնց կեանքին ու գործունէութեան անդրադարձան «Եղիշ Չարենց» գրականութեան ու արուեստի թանգարանի տնօրէն Կարօ Վարդանեան, գերասան Ազատ Գասպարեան եւ գրականագէտ Դուրիթ Գասպարեան: Ապա «Էլ միածինն ի չօրէ» շարականի երգչախումբի անդամներու Հայրապետական սրբատառ կոնցերտները, զորս ընթացիկին Ս. Յովակիմ Եպսկ. Մանուկեան, Մուշեղ Եպսկ. Պապեան եւ Յովնան Եպսկ. Յակոբեան:

Կոնցերտներու ընթացումէն յետոյ Վեհափառ Հայրապետը մշակուիթի գործիչներուն յանձնեց Հայ եկեղեցւոյ պատուոյ բարձր շքանշանը՝ ի գնահատութիւն անոնց բազմամրայ վաստակի:

Այնուհետեւ իրենց սրտի խօսքը արտասանեցին մեծարեալները՝ շնորհակալութիւն յայտնելով Նորին Սրբութեան, մշակուիթի գործիչներու նկատմամբ Մայր Աթոռի կողմէ մշտապէս գրասեղանող ուշադրութեան համար: Բանաստեղծներու դիտարկմամբ, իւրաքանչիւր Հայ արուեստագէտի համար ամենայն Հայոց կեդրոնի պարզեւր մեծագոյն գնահատանքն է իրենց ծառայութեան եւ վաստակի: Իսկ Հայաստանի արտասանեց Նորին Սրբութիւնը:

## Իրանի Նախագահ Մահմուտ Ահմէտիւնէնաւ երէկ շփումներ ունեցաւ Երեւանի մէջ

# ՍԵՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեան շնորհեց, թէ երկու երկիրներու միջեւ երկխօսութիւնը ունի լաւ ընթացք

Իրանի Նախագահ Մահմուտ Ահմէտիւնէնաւ, որ պաշտօնական միօրեայ այցելութեամբ երէկ կը գտնուէր Երեւանի մէջ, նախագահական նստավայրին մէջ մէկտեղուեցաւ Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանի հետ: Երկրորդամանի տեսակցութեանն ընթացքը երկու երկիրներու պատուիրակութիւններու մասնակցութեամբ կայացան ընդլայնուած կազմով բանակցութիւններ:



Մահմուտ Ահմէտիւնէնաւ եւ Սերժ Սարգսեան երէկի հանդիպման ընթացքին

Այս առթիւ արտասանած իր խօսքին մէջ Սերժ Սարգսեան յայտնեց, թէ կայացած ասանձնազրոյցի ընթացքին Ահմէտիւնէնաւի հետ եկած են շատ կարեւոր եզրակացութիւններ, որոնք պիտի օգնեն երկու երկիրներու յարաբերութիւններու աճը:

## Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ երկխօսութեան բարելաման նախագիծը ընթացքի մէջ

# ԺԱՊԱԿՆՆԵՐՈՒ ԾՈՒՑԱԴՐՈՒՄ

«Քիւլթուր» Համալսարանի երդիքին տակ Հայ եւ Թուրք բեմադրիչներ ներկայացուցին իրենց գործերը

Թուրքիա-Հայաստան երկխօսութեան բարելաման նախագիծը երէկ «Քիւլթուր» Համալսարանի Աթոլոգի մասնաճիւղի միջոցով կայացաւ: «Էնտեր Էօզթուրնալը» սրահին մէջ կազմակերպուած էր կարճ փաստափաշարական ժապաւէններու ցուցադրում մը: Հարկ է նշել, թէ այս նախագիծը իրականացուցած են «Քիւլթուր» Համալսարանի Համաշխարհային Քաղաքական Միտումներու Կեդրոնը, «Ինթէլիտուզ Հայաստան»ը եւ «ՃԱՄ Քիւլթուր»: Սրահին մէջ ներկայ էին Համաշխարհային Քաղաքական Մի-



Կեդրոնի վարչախիւններն ու բեմադրիչները (Լուսանկար՝ Արի Թաշ)

## ՄԵԾԱՐԱՆՔԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ



Վեհափառ Հայրապետը եւ պարզեատրեալները Պուրիշի մօտ Հայաստանի դեսպանատան մէջ տեղի ունեցաւ երկրի անկախութեան 20-ամեակին կապակցութեամբ ուսումնական Համայնքի ղեկավարներուն եւ երեւելի ներկայացուցիչներուն պարզեաներու յանձնման արարողութիւնը: Թուսմանահայոց Միութեան Նախագահ, նախկին նախարար, ծերակուտական Վարուժան Ոսկանեան «Մովսէս Խորենացի» շքանշանին արժանացած էր Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ: Իսկ Հայաստանի Սփիւռքի Նախարարութիւնն ալ

## «ԳԹԹՕ ԿԱԼԱԹԱՍԱՐԱՅ»Ի ՀԱՄԱՐ ԾՆՈՐՀԱՆԴԷՍ

«Արաս»ի կողմէ հրատարակուած «Փօթօ Կալթասարայ» պատկերագիրքին շնորհանգէլը երէկ կայացաւ «Սայթ»ի Ղալաթիոյ կեդրոնին մէջ: Այս առթիւ տեղի ունեցած ասուլիսի ընթացքին արտայայտուեցան գրքին պատրաստողն ու հրատարակիչը՝ Թայֆուս Սէրթթաշ, արձակագիր Գարին Գարա-

## ԳԱՐԹԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Խնդրագրատան մէջ երկէ ընդունեցինք այցելութիւնը Օննիկ Էօզէլիքի ու Վարդուհի Քիւլթուրեանի, որոնք մաս կը կազմեն շաբաթավերջին Գարթալի Ս. Նշան եկեղեցւոյ մէջ կայանալի թաղային խորհուրդի ընտրութիւններուն մասնակից կապոյտ ցանկին: Կայացած զրոյցի ընթացքին Օննիկ



Հիւրերը խմբագրատան մէջ

**Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԵՇԻԼԳԻՒՂԻ**  
**Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԷՋ**  
 26 Դեկտեմբեր 2011, Երկուշաբթի, Տօն է Սրբոյն Ստեփանոսի նախազգացիչի եւ առաջին Մարտիրոսին: Օրուան տօնին առթիւ արարողութեանց եւ Ս. Պատարագին կը հանդիսապետուի, օրուան պատգամը կու տայ՝

**ԳԵՐՇ. Տ. ՍԱՀԱԿ**  
**Ս. ԵՊՍԿ. ՄԱՇԱԼԵԱՆ**  
 Ս. Պատարագը կը մատուցանէ՝  
**ԱՐԺ. Տ. ՊՍԱԿ Ա. ՔՀՆՅ. ԹԵՂԵՆԼԵԱՆ**  
 Առաւօտեան եւ Ս. Պատարագի երգեցողութիւնները կը կատարուին Արժ. Քահանայ Հայրերու կողմէ:  
 Ուստի սիրով կը հրաւիրենք մեր բարեկաշտ ժողովուրդը ներկայ գտնուելու սոյն տօնակատարութեանց:  
 Առաւօտեան ժամ. 09.00  
 Ս. Պատարագ 10.30

**ԹԱՂԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԻՎ ԵՇԻԼԳԻՒՂԻ**  
**Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ**

**ՄԵԾԱՐԱՆՔԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ**  
 \*շաբ. Ա. էջէն

Կարգ մը ուսանողներու համար սահմանած էր շքանշաններ, ինչպէս նաեւ պատուոյ գրքեր, զորս յանձնեց Պուրջէի մօտ Հայաստանի Դեսպան Համլէթ Գասպարեան:

Սփիւռքի նախարարութեան ոսկեայ մետալներուն արժանացան բարերար Յակոբ Գրքմարտեան եւ խորհրդարանի պատգամաւոր, փոքրամասնութիւններու խմբակի նախագահ Վարդուհան Բամպուրճեան, «Ուիլիամ Սարգիս» շքանշանի՝ բանաստեղծուհի եւ պատմաբան Անայիս Ներսիսեան, գրող եւ հրատարակիչ Վարդան Առաքելեան եւ Պետրոս Խորասանճեան, լրագրող եւ թարգմանիչ Մատիլէ Գարագաշեան, «Կոմիտաս» շքանշանի՝ ճազի յայտնի երաժիշտ Հարրի Տալիթեան, «Արշիլ Կորբի» մետալին՝ նկարիչ Միլիոշ Եաքոփովիչ:

Նախարարութեան պատուոյ գրքերուն արժանացան օտարերկրացի երգիչ Երուսաղ Ռուսոմանեան, լրագրող եւ թարգմանիչ Մատիլէ Գարագաշեան, գրող թարգմանիչ, լրագրող Սարգիս Ալեան, ճազային երաժիշտներ Կարպիս եւ Գաբրիէլ Տէտեանները, նկարիչներ Փաւել Պոտեպառու, Տէպրէյն Գեորգիան, Ռուսոմանի շառք Միլոսեան գլխաւոր քարտուղար Պերճ Մարգարեան եւ նկարիչ, Հայկական սրբապատկերներու վերականգնման մասնագետ Հայկ Սարկաւազ Ազարեան:

Այս առթիւ Համլէթ Գասպարեան շնորհակարան էր եւ բարեմտական խօսքեր յղեց պարգևատրելուներուն:

**ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ՄՕՏԵՑՈՒՄԸ**  
 \*շաբ. Ա. էջէն

արտօնութիւն չի խնդրեր, Յարան ունի իր համոզմունքները, մարդու իրաւունքները եւ յարգանքը յիշատակի առջև», շեշտեց Յարանայի նախագահը:

**ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԽՐԱԽՃԱՆՔ ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ ՏԱՆ ՄԷՋ**



Գարակեօզեան Տան վարիչներն ու մանկապարտեզի տղաքը (Լուսանկար՝ Արի Թաշ)

Գարակեօզեան մանկարանի երգիչները տակ երկկար Ամանորի հանդիսաւոր խրախճանք մը: Մանկարանի սաները սարկեցան անմոտանալի պահեր: Գարակեօզեան Տան Հիմնադիր Տէր. Գարուստ Գոփանի, մանկարանի տնօրէնուհի Արուսեակ Քոչ Մոնէլի, Գարակեօզեան Վարժարանի Տնօրէնուհի Մէլի Քիրատի Գարալի, տիկնանց կազմի անդամուհիներու, կրթական մշակներու եւ ծնողներու ներկայութեամբ փոքրիկները ներկայացուցին մշակութային զուարճալի յայտագիր մը:

Նախ «Նիւտոնը» դասարանի սաները ներկայացուցին թատերակ կը «Կազմող Պապան պատրաստել» խորագրով: Անոնք ապա երգեցին անգլիերէն երկու երգեր: «Ննչափաւ» դասարանը նախ արտասանեց Անահիտ Սարգիսեանի «Կիրակոսի անուշապուրը» բանաստեղծութիւնը, ապա բեմադրեց

**KARTAL SURP NIŞAN KİLİSESİ VAKFININ**  
**25 ARALIK 2011 PAZAR GÜNÜ**  
**İSTANBUL GENELİNDE**  
**YAPILACAK**  
**YÖNETİM KURULU SEÇİMİ**  
**MAVİ LİSTE ADAYLARI**  
 ONNİK EROL ÖZÇELİK  
 MİSAK ŞERNAZ  
 BAYKAR KAPAMACIYAN  
 MURAD MIHÇI  
 ERMAN AKDEMİR  
 VARTUHI KÜÇÜKMİSIRLIYAN  
 ARDAHAN ŞERNAZ  
 RAFİ ÜNSAL

**Sandık Konulan Merkezler:**  
 Yeşilköy S. Stepanos Kilisesi, Samatya S. Kevork Kilisesi, Kartal S. Nişan Kilisesi, Feriköy S. Vartanants Kilisesi, Kuruçeşme Yerevman S. Haç Kilisesi, Kadıköy S. Takavor Kilisesi.  
**Seçim saat 09.00-17.00 arasında yapılacaktır.**  
 Bakırköy İlçesi Yeşilköy’de, Fatih İlçesi Samatya’da, Üsküdar İlçesi Kadıköy’de, Beşiktaş ve Sarıyer seçmenleri Kuruçeşme’de oylarını kullanabilirler.

**ԳԵՐՄԱՆԻՈՑ ՄԷՋ ԺՈՂՈՎ**  
 \*շաբ. Ա. էջէն

Հերթին աննախընթաց քայլ մըն է օսմանագիտութեան ներս:  
 Աշխատաժողովի նիւթին շուրջ ընդհանուր ներկայացում մը կատարեց էլքը Հարթման (Պերլի-նի ազատ Համալսարան, յուշամատեն): Խօսք առին նաեւ Ալլին Գոչունեան (Եւրոպական Համալսարան, Հիմնարկ), Արա Սարաֆեան (Կոմիտաս Հիմնարկ), Թայլին Սուսեան (Միւնիխի Համալսարան): Քննարկումներուն իրենց մասնակցութիւնը բերին նաեւ տարբեր երկրներէ ժամանած օսմանագէտներն ու Հայագէտներ՝ Յիւրիի Համալսարանէն Հանց Լուքա Քիզըր, Լաֆայէթ գոլէճէն Ռաբէլ Կոչկարեան, Էրլանդերի Համալսարանէն Սաշիկ Լազրեան, Եփրայիկան Համալսարանէն Էյալ Կիւնիօ, Մթրապուրի Համալսարանէն Եոհան Եթրաուս եւ Արեւիկան Հիմնարկէն Ալէքսանտր Թումարբիւն:

**«ՃՅԹՕ ԿԱԼԱԹԱՍԱՐԱՅ»Ի**  
 \*շաբ. Ա. էջէն

գաշը եւ «Մայթ»ի ընդհանուր տնօրէն ՎարդՔ Բորթուն:  
 Անոնք ընդգծեցին բանաւոր պատմութեան կարեւորութիւնը, լուսանկարչական արարումը, ընկերահասարակական ազդակները, «ՃՅԹՕ Կալաթասարայ» Հաստատութեան Համար ընտանիքներու, կանանց ու մանուկներու առանձնայատկութիւնը, Հաստատութեան սիւն՝ Մարիամ Շահինեանի անձը եւ այլն: Ասուխը կ'ուղղեցուէր պատասխան ցուցաբերութեամբ:

Ելոյթներէն վերջ եղաւ Հարց ու պատասխանի բաժնի մը:

Ասուխին ունկնդիրները, որոնց կարգին էին նաեւ Մարիամ Շահինեանի յետնորդները, հետաքրքրութեամբ ունկնդրեցին յայտնուած կարծիքներուն ու տրուած բացատրութիւններուն:  
 Հարկ է նշել, թէ «Մայթ»ի կեդրոնին մէջ կը ցուցադրուին նաեւ «ՃՅԹՕ Կալաթասարայ»ի լուսանկարները:

**Daima Taze ve Nefis**  
 Sağlıklı Ürün Çeşitleri

**SERVİSİMİZ VARDIR.**  
 NOEL YORTUSUNUN İNSANLIĞA SAĞLIK, MUTLULUK VE BAŞARI GETİRMESİNİ DİLERİZ.

HARBİYE	TEL: (0212) 343 42 25
BARUTHANE	TEL: (0212) 230 35 76
TEŞVİKİYE	TEL: (0212) 327 79 40
TOPAĞACI	TEL: (0212) 232 33 16
ULUS	TEL: (0212) 280 00 80
1. LEVENT	TEL: (0212) 324 36 24
KURTULUŞ Mrk.	TEL: (0212) 233 49 35
KURTULUŞ SEYMEN	TEL: (0212) 225 74 39
OSMANBEY	TEL: (0212) 234 71 15

**göreme muhallebisi**  
 .....1965.....  
 Sayın dostlarımız ve müşterilerimizin NOELini kutlar, esenlikler diler.  
 KURTULUŞ CAD. NO:60  
 TELEFON: (0212) 246 53 67  
 www.gorememuhallebisi.com

**FT Hair Club**  
 BAY VE BAYAN KUAFÖR SALONU  
 FAHRETTİN YANBAK  
 Dostlarına ve müşterilerine NOELin sağlık, başarı ve mutluluk getirmesini candan diler.  
 BARUTHANE CAD. NO: 51/F KURTULUŞ  
 TEL: (0212) 219 47 32  
 GSM: 0535 367 63 68  
 www.fthairclub.com

**ՍԵՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ**  
 \*շաբ. Ա. էջէն

աւելի խորացման: «Մենք շատ ջերմ, կառուցողական միջոցառում մէջ Համաձայնեցանք քանի մը հարցերու շուրջ եւ եթէ արագացնենք կիսկրահարգումն երրորդ գծի կառուցումը, որոշակի աշխուժութիւն կարենանք հաղորդել նախաձեռնութիւն մեր շուկային, ապա իրօք կրնանք մեծցնել ծաւայները եւ ընդհանրապէս կրնանք աշխուժութիւն բերել առեւտրաշրջանառութեան», ըսաւ Սերժ Սարգսեան:

Անուհետեւ այցի արդիւնքներով ընդունուեցաւ Համատեղ յայտարարութիւն: Այնտեղ նշուած է, թէ երկու պետութիւններու նախազգացման միջնաբանակցութիւնները ընթացած են բարեկամական եւ փոխմընդման միջոցով: «Նախազգացման Սերժ Սարգսեան եւ Մահմուտ Աճմէտինճատ, գոհունակութիւն յայտնելով Հայաստանի եւ Իրանի միջեւ բարձրամակարդակ յարաբերութիւններու կապակցութեամբ, որոնք Հիմնուած են Հայաստանի եւ Իրանի ժողովուրդներու բազմադարեան բարեկամութեան վրայ, վերահաստատեցին իրենց վճռակալութիւնը աւելի զարգացնելու երկիրդմանի բարեկամական եւ փոխաշահուած յարաբերութիւնները: Երկու նախազգացման կարեւորեցին երկու երկրներու միջկառավարական յանձնաժողովի գործունէութիւնը եւ շեշտեցին 29-30 Մայիսին Քննարկի մէջ կայացած միջկառավարական Համատեղ յանձնաժողովի 10-րդ նիստի ընթացքին ձեռքբերուած պայմանաւորութեաններուն, ինչպէս նաեւ երկու պետութիւններու միջեւ ստորագրուած այլ փաստաթուղթերուն հետամուտ ըլլալու անհրաժեշտութիւնը», նշուած է յայտարարութեան մէջ:

Աճմէտինճատի այցելութեան ընթացքին երկու երկրներու միջեւ ստորագրուեցան վեց փաստաթուղթեր, որոնք կը վերաբերին ուժանիւթի, աշխատանքի եւ բնակարանի հարցերու բնագաւառէն ներս հարցերու, բնապահպանական համագործակցութեան եւ այլ նիւթերու:

Երկու պետութիւններու նախազգացման զօհունակութիւն յայտնեցին ուժանիւթի բնագաւառին մէջ ընդլայնուող համագործակցութեան կապակցութեամբ:  
 Նախազգացման կարեւորեցին Արաքս գետի վրայ ջրակիրաբաշխման, ինչպէս նաեւ երկու պետութիւններու երկաթուղային ցանցերը միացնող երկաթգծի եւ Իրան-Հայաստան բարեկարգ խողովակաշարի կառուցման ռազմավարական ծրագրի իրագործումը: Անոնք ընդգծեցին գործարար շրջանակներու տնտեսական եւ ներդրումային գործունէութեան համար նպաստաւոր պայմաններու ստեղծման կարեւորութիւնը: Անհրաժեշտ համարուեցաւ տարաքաղաքէն ներս յարստեւ խաղաղութեան, կայունութեան եւ անվտանգութեան հաստատումն ու ամրապնդումը:

Նախազգացման կարեւորեցին նաեւ զանգուածային ոչնչացման գէնքի չտարածման խնդրով իրենց հաւատարմութիւնը արտայայտելով միջուկային գէնքի չտարածման պայմանագրին: Անոնք նշեցին միջուկային ուժանիւթի խաղաղ օգտագործման իրաւունքը բոլոր երկրներու, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Իրանի համար: Երկու պետութիւնները ընդգծեցին բանակցութիւններու միջոցով եւ դիւանագիտական ուղիներով Իրանի միջուկային խնդրի կարգաւորման կարեւորութիւնը:  
 Բացի Սերժ Սարգսեանէ, Մահմուտ Աճմէտինճատ մէկտեղուեցան նաեւ խորհրդարանի նախագահ Սամուէլ Նիկոյանի եւ վարչապետ Տիգրան Սարգսեանի հետ:

**ԳԱՐԹԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ**  
 \*շաբ. Ա. էջէն

Էօզէլիք յայտնեց, թէ ինք երեսուն տարեկ է վեր կը գտնուի Ա. Նշան Եկեղեցւոյ միջավայրէն ներս, նախ որպէս պարզ հաւատացեալ մը եւ յետոյ որպէս թաղային խորհուրդի ատենապետ ու հիմա ալ կը փափաքի շարունակել իր գործունէ մասնակցութիւնը ունենալ եկեղեցաշէն աշխատանքին մէջ: Իրենց հետագայ ծրագրերուն մաս կը կազմեն եկեղեցւոյ վերանորոգումն ու բարեկարգումը, թաղի նախկին Պէգեան վարժարանի շէնքը վերստին եկեղեցւոյ սեփականութիւնը դարձնելը, եկեղեցւոյ կայունացնելու նորոգումը, Համայնքային վարժարաններէ ներս աշակերտներուն կրթաթոշակ յատկացնելը եւ այլն: Ջրային տեղուցման մեր հիւրերը ըսին, թէ կ'ակնկալեն Համայնքի անդամներուն արկայնութիւնն ու բուհարկութիւնը, քանի որ ընտրութիւնը տեղի պիտի ունենայ բովանդակ քաղաքի տարածքին ու բուհարկութիւնը դրուած պիտի ըլլան Երկրիկի, Սամաթիոյ, Գարթալի, Գարթալի, Գուրուշէմէի եւ Ֆէրիդիլի եկեղեցիներուն մէջ: Օննիկ Էօզէլիքի եւ Վարդուհի Քիւչիւքմարեանի գործակիցներն են Միսաք Շէրմազ, Պայքար Գալիսեան, Մուրատ Մըխըմ, Էրման Ազմէտի, Արտահան Շէրմազ եւ Բաֆֆի Իւնսալ:

**ԺԱՊԱԼԷՆ ՆԵՐՈՒ**  
 \*շաբ. Ա. էջէն

տուներու Կեդրոնի նախագահ Տէր. Մնեսուր Ազիլին, մասնագէտներ, հրաւիրեալներ ու աշակերտներ:

Չեռնարկի բացման խօսքը արտասանեց նախագահը՝ աշխատակից, Համաշխարհային Քաղաքական Միութեան Կեդրոնի Նորոտ Մարաշեան: Այնուհետեւ ցուցաբերուեցան հետեւեալ ժապաւէնները. «Վերագործ գէպի արմատներ, հեթանոս Հայաստանը» (բեմադրիչ Ընդլայն Շահին, «Պիլի» համալսարան), «Հայաստանի մէջ ֆուլթայլ» (բեմադրիչ Պուլութ Թար, «Պահլէշէն» համալսարան), «Արարատի շուրթին» (բեմադրիչ Հայկ Իսրահիմ Ինսալ, «Քիւլթիւր» համալսարան), «Երեսունը բարձր կրօններու վրայ» (բեմադրիչ Ալլին Քրքմըր, «Պիլի» համալսարան), «Նոր Անատոլի» (բեմադրիչ Պուրակ Փէքէզէր, «Պողպիլի» համալսարան), «Տարտուած ընտանիքներ» (բեմադրիչ Լիւլիֆէր Քէօրիքմէզ, «Էլէ» համալսարան) եւ «Քաղաքին մեծ որսորդը» (բեմադրիչ Ալլիտա Չիլիկարեան, Հայաստան): Կարճ այս ժապաւէններու մէջ Ռուբընի Հայաստան մեկնած բեմադրիչները զանազան երեսակներով կը ներկայացնեն երկրի կեանքը, մարդոց ստորեան, անցեալն ու ներկան: Իսկ Հայաստանէն մասնակցած միակ բեմադրիչը՝ Ալլիտա Չիլիկարեան հանդիսականներուն կը ներկայանար Սուլուլուլէ վերաբերեալ նկարահանած իր ժապաւէնով:

Յուշագրութեան վերջ բեմադրիչներուն պարգևներ յանձնեց Համաշխարհային Քաղաքական Միութեան Կեդրոնի փոխ-նախագահ Սիլվիա Թիլլաքի:

**ՇՐԱՆՇԱՆԻ ՅԱՆՁՆՈՒՄ**  
 \*շաբ. Ա. էջէն

«Դուք ձեր գրական ստեղծագործութեամբ ու փաստակով փառաւոր առաքելութիւն իրականացուած էք մեր ժողովուրդի կեանքին մէջ եւ ձեր ստեղծագործութիւններով կրթած սերունդներ, որովհետեւ ձեր ստեղծագործութիւնները մարդուն կ'ուսուցանեն զեղեցիկն ու ճշմարիտը, արդարն ու արժանին, նաեւ կը կերտէ Հայրենասիրութիւն, սպասարկութիւն, նուիրական մեր բոլոր արժէքները», ըսաւ ան: